

յատկութեամբ սեպհական կալուածոց իւրեանց եղելոց 'ի կարքի և 'ի վրացտուն: Այլ և ընդ ժամանակս՝ ընդ այնուհի, յորում աղմկեալ էր աշխարհն արարատեան պէսպէս խովութեամբ և տառապակրութեամբ 'ի բռնտորէն նատր Շահայ, որէ Թահմազ զուլի և անմ, Հայրն յիշեալ տէր Խաչատուր բահանային ևս, որ է Ուղուրլու անդրանիկ որդին Մաղաքայ, փախստական լինի յերկիրն վրաց 'ի Ցըփ-խիս բաղաք, հանդերձ Գասպար, Մելքոն և Բաղդասար եղբարբէ իւրովք հինգ ամսօք յառաջ բան զմահ Հօրն իւրոյ Մաղաքայ յաւուրս մանկաժողով հրամանին նշյն նատր-շահայ, և բնակեալ անդ ամս բան, ամուսնանայ ընդ դստեր Զաքարիայ Հեղինար անուն և ծնանի որդիս և դստերս անդանօր, և 'ի վերադառնալն 'ի Ցիկիսայ կրկին յերևան յետ իրը բան ամաց, զօրանայ դարձեալ բարի անուամբ և յաջողութեամբ և լինի երկելի յոյժ 'ի մէջ ազգի իւրոյ և բնակչաց երկրին, յանուն որոյ՝ և ազգն կոչեցան յետոյ Ուղուրլուեանք, որպէս և մինչև ցայսօր 'ի բոլոր բնակչաց երկրին ազգ նորա և ծնունդը կոչին և անուանին Ուղուրլուեանք: Ահա այսպէս վերսոյիշեալ ազնիւ յօհաննէս տէր Խաչատուրեանն, և յազգէ և 'ի ցեղէ Լազարէ Միրզային որդւոյ Էլի միրզովին և թոռան Լւսոն վրաց արբային. ուստի ըստ այսմ կոչի ևս Էլի-միրզեան կամ Լազարէ միրզեան, ինքն և սմենայն ազգատոհմ իւր. զոր և մեք վասն ձըշմարտութեան բանից՝ որպէս և գրեցարն, նոյնպէս վկայեմբ ահա իսկական կնքովք և ստորագրութեամբ մերովք: յամի Տեսուն 1814, յամսեանն յունիսի 'ի սուրբ Կաթուղիկէն Էջմիածին:

Անդամբ սուրբ ժողովոյն բարձրագոյն Խորհրդարանի որբոյ կաթուղիկէ Էջմիածնի:

### ՈՒՈՒԲԻՆԵՍՆ ՏՈՀՄԸ

Յիսուսի Քրիստոսի ծառայ և շնորհիւ նորա Տէր Միքայէլ Կաթուղիկոս Ամենայն<sup>(\*)</sup> Հայոց, և ծոյրագոյն պարիգրդ Մեծին Կիլիկիոյ, և սպասաւոր սուրբ լուսաւորչի շնորհաձիր Աջոյն և յանուն Ամենասուրբ երրորդութեան հիմեալ վեհափառ Աստուածեան Մայր սուրբ Աթոռոյն:

Ցորմէ ժամանեսցէ գիր սիրոյ ողջունի և օր հնու-

թեան. Աղօթք պահպանութեան, Ծնորհը Առաքելական և Աստուածային օրհնութիւն և նախախնամական գլութիւն, եկեսցէ իջցէ և հանդիցէ, հեղի և ծաւալեսցի և սփռեալ տարածեսցի՝ Առ 'ի վերայ օրհնեալ բարեպաշտան Աստուածասէր բոլոր Ազգիս Հայոց որբ են բնակեալ յերկրին Արաստանու, Աստուածարեալ Առաքելաշնորհ դետ կարգեալ Արհի Եպիսկոպոսաց, Աստուածարան ծայրագոյն վարդապետաց, Մեղսաքաւեչ Քահանայից, ուսումնասէր սարկաւագաց և Դպրաց, հաւատարիմ Երեցփոխանաց, հարազատ գանձապետաց, բարեսէր յարգի իշխանաց և իշխանապետաց, և հասարակ լուսաւորչածին ժողովրդոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիսասարդաց և կուսից, մեծաց և փոքոնց, ևս և քթասիրտ Քրիստոսասէր Աղքատաց, և ամենայն չափու հասակի հաւատացելոց 'ի Քրիստոս Յիսուս լիցի ցնծալ խաղաղաւէտ կենօք միշտ Ամէն:

Ծնորհը՝ սէր՝ և Խաղաղութիւն 'ի Նօրէ Ամենակալէ, յորդւոյն Միաձնէ և 'ի սուրբ Հոգւոյն կենարարէ և յառատահաւալ պարգևատուողէ, եկեսցէ իջցէ և հանդիցէ, հեղի և տարածեալ սփռեսցի, 'ի վերայ Տանց և բնակութեանց ձերոց, 'ի վրայ ուստերաց և դստերաց, զարմից և զաւակաց ձերոց, 'ի վերայ առից և արոց, այգեաց և անդաստանաց ձերոց, 'ի վերայ ընտանեաց և բարեկամաց ձերոց, միշտ Ամէն:

Եւ ընդ Աստուածապարդեկի սուրբ ողջունի և շնորհածաւալ օրհնութեան և հաստատագոյն վկայութեան սուրբ կոնդակաւս, ծաներո՛ւք ո՞ լուսաւորչադաւան որդիք մեր Հոգեւոր և աղնիւ սիրելիք 'ի Ցէր: Ըստ որում օրէն իսկ է՝ միշտ գիտել և ճանաչել, ըստ երջանիկ առաքելոյս՝ զընտանիս և զաղգային սերունդս, որպէս բաջ իսկ յայտնի է՝ զաղգն մեր և զսերունդս, որ 'ի բաջ Ռուբենէ մինչ ցայն կէտ սերեալ և հաստատեալ է, 'ի պատմութեանց և 'ի իմաստից վիպասանութեանց բացարձակ երկեալ տեսանեմբ, որպէս յայտ է, բանզի յորժամ տիրապետեաց ուուրէն բաջ իշխանն Հայոց 'ի մեր երկիրս այս, բաղում քաջութիւնս արարեալ հաստատեաց զթագաւորութիւնս, բայց ինքն երանելիս՝ ոչ եղև արժանի տեսութեան և վայելցութեան ազգիս թագաւորութեան, սակայն թոռն իւր բաջն Լւոն թագ

կապեաց 'ի գլուխ իւր և եղեւ արժանի վայելչութեան թա-  
գաւորութեան ազգիս, մինչև 'ի վերջինն Լւսն, հաստատուն  
և իսկովին քաջութիւնս ցուցին բոլոր աշխարհիս և յետ  
այսր քաջութեանց, եղեւ խառնակում մեծ և խռովութիւն  
'ի միջի իւրեանց, շեշտիւ 'ի կորուստ եղեն հանդերձ թա-  
գաւորութեամբ իւրեանց. և Խղճալին Արբայն Լւսն գնաց  
'ի գերութիւն եգիպտացւոց. յայնժամ եղբայրն իւր քաջ  
իշխանն յօհաննէս, ժողովեալ ընդ իւր բազում մարդիք  
արբ և կանայք, ելեալ յերկրէն իւրմէ չուեաց 'ի վրաստան  
և անդ բնակեալ հովուեաց ընդ իւր գնացեալ զազգն մեր  
հայոց, քաջ իսկ գիտեմբ և ճանաչեմբ, այսպէս գոյն և լի-  
նին, բանզի յԱզգահամարութեան մերում յայտնի է՝ որ-  
պէս բազումբ տեսեալ և պատմեն, և անտի 'ի քաջ իշխա-  
նէն յօհաննիսէ յառաջացան և եղեն սերունդը մեծ. գիտեմբ  
և վկայեմբ, 'ի յօհաննիսէ որ և եղբայր Արբայն Լւսնի.  
ծնաւ յԱկոր, 'ի յԱկովբայ պայընտուր, 'ի պայընտրայ Սի-  
մէօն, 'ի սիմէօնէ զուրաբ, 'ի զուրաբէ յօհաննէս, 'ի յօհան-  
նիսէ Ալխաս, յԱլխասէ Սիմէօն և զուրաբ, 'ի զուրաբէ Մով-  
սէս, 'ի Մովսիսէ Դաւիթ, Գաբրիէլ, Սօլոմօն և Սօսի. սոքա  
'ի յօհաննիսէ քաջ իշխաննէն Ռուբինեանց. յառաջ եկին և  
են մինչև ցայսօր, քանզի և մեր յառաջ եկեալ գոլով 'ի  
նոյն սերունդէ ոռուբինեանց գիտեմբ և ճանաչեմբ զազգն  
մեր և զսերունդս, որ 'ի ոռուբէն իշխաննէն հայոց յառաջ  
եկին, սմին իրի 'ի վաղ ժամանակաց մինչ ցայս վայր Խընդ-  
րէին նախնիբ մեր գիտել և իմանալ զազգն յօհաննու եղբօր  
Արբայն լւսնի ոռուբինեանց, և ոչ կարէին գիտել և իմա-  
նալ, փառք բարերարին՝ և մեր Աստուծոյ շնորհօք գիտելով  
զազգն մեր՝ որ 'ի Թիֆլիս բնակեալսն. Դաւիթ, Գաբրիէլ,  
Սօլոմօն և Սօսի, զարենակիցն մեր, բաղմաւ ուրախութեամբ  
և ցնծութեամբ փառս մատուցեալ առ բարձրեալն Աստուծ  
և գոհունակ եղեալ զնմանէ շնորհակալ եղաք, զորս Ցէր  
պահեալ պահպանեսցէ զերծ կացուցեալ յամենայն վտանգից՝  
շնորհիւ և գթութեամբ իւրով. ուրեմն սիրելիք, գիտելով  
գիտասչիբ զայս Ալխասի զորդիսն, են 'ի ոռուբէնէ սերեալ  
և մեր վկայեմբ, որպէս և մեր եմբ, նոքա ևս են այնպէս,  
քանզի ունիմբ հաստատագոյն վկայութիւնս 'ի պատմութեանց  
ոռուբինեանց, և են արենակից մեր, ահա ես աղօթարարն

ձեր վկայեմ հայրապետական աստիճանաւս, որ և ասսպէս՝ ի վկայութիւնս մեր հաստատ և անսուռ գիտելով լերուք ողջ և օրհնեալ։ Գր. ի 1849 և նոյեմ. 17 ի սուրբ Աթոռս Կիլիկիոյ մեծի հրաշալոյ։

2 կնիք ձախ կողմց.—Միքայէլ Կաթողիկոս  
ՌՄՇԲ

Է.

Գլւին հրեշտակների մէջ մեծ կնիք հայրապետական։

### Հ. Յ. ԶՈՀՐԸԲԵԾՆԻ ԹՈՒՂԹՈՅ<sup>1)</sup>

Օրինակ թղթոյն յովաննէս վարդապետին զոհրաբեան,  
զոր գրէ առ ազգականս իւր ՚ի Փարիզու։

Պատուական և սիրելի եղածը որդւոյ իմոյ պարոն մկրտչին  
ողջոյն և օրհնութիւն։

՚Ի փարէզ 1819, դեկտ. 26։

(յետ բազում բանից գրէ պյսպէս)

Բայց ալէսէվիէ բաթօլիկաց հալածումին բանը բեզմէ կը լըսեմ։ Գամբ որ՝ այս բանիս մէջը. որդիք, աշվընիդ բացէք, որ պօշ տեղը դուք ալ արան չերթաք, դուք ձեր ուղիղ բրիստոնէական հաւատըը պահելով՝ առանց խղճաւանց ձեր ազգի ժամէն ետ մի՛ կենաք երթալու, անձամի չէ, սինօվա չէ, հոն ալ նոյն բրիստոսը և աստուածածինն է, որն որ ֆրէնկին ժամը. պյրըսէզի չիկայ, և ասանկ կըսեն նաև ֆրէնկիստանի ֆրէնկները. ու երբ որ կը լըսեն թէ՝ հայոց ազգը երկու ֆոխայ եղած՝ մէկ զմէկը կհալածէն, հախը բուն հայերուն կուտան, բաթօլիկները էշէկ են կըսեն, որ այս պատճառով, ըստըկէ կելլան, բանաը կը մասնան, ասանկ ըսելնին լսած է՝ նաև փափին բարտինալներէն և փոելարներէն. որ մեր խեղճ միամիտ բաթոլիկները տգիտութեամբ կզոհվին, եօխ կըլլան։

Ուստի դուք, ինչպէս ըսի՝ խելքերնիդ գլուխնիդ ժողովեցէք, դուք ազգաւ հայ էք, ձեր պատրիարքին պէտք է՝ որ հնազանդիք, որ յայտնի ճշմարիտ հաւատոյ դէմ բան

<sup>1)</sup> ՚Նամակագրութիւնը նախնեաց գրչագրից։